



«05» ..... 03 ..... 2000թ.

17.1.421-10

**ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ «ՌՈՉ ԵՎ ԱԼԵՔՍ ՓԻԼԻՊՈՍ»  
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ**

**Թանկագին հայրենակիցներ,  
Հայրենասեր ուսուցիչներ, ծնողներ և աշակերտներ,  
հարգելի տիկին Ափանյան,**

Յուրաքանչյուր անգամ այցելելով «Ռոչ և Ալեքս Փիլիպոս» դպրոցը, հպարտություն և ջերմության զգացում ես ապրում, երբ հեռավոր Ամերիկայում մյան ազգաշեն կառույց է գործում՝ իր սքանչելի աշակերտներով և հայրենամուտք մանկավարժներով:

Միրով շնորհավորում եմ դպրոցի 40-ամյա հորելյանը:

Իմ շնորհակալական խոսքն եմ ուզում ուղղել ուսուցիչներին, ծնողներին, բոլոր մեր այն հայրենակիցներին, որոնց ջանքերի շնորհիվ է իրականություն դարձել հայ երեխաների հայեցի կրթության և դաստիարակության սրբազան գործի կազմակերպումը:

Հայ դպրոցի սիրելի՛ մանկավարժներ, սիրելի՛ ուսուցչապետ տիկին Ափանյան, ուզում եմ իմ անսահման շնորհակալությունը և ամենամեծ խոնարհումը փոխանցել ձեզ, որ այդքան եռանդ եք ներդրել, որ կարողանաք ամերիկյան հողում փոքրիկ Հայաստան ստեղծել, որ իրողություն եք դարձրել «Հայ ոգու դարբնոցն է հայ դպրոցը» ճշմարտությունը: 40 երկար ու ձիգ տարիների ընթացքում օտար ավերում հիմնել, պահել, պահպանել և զարգացնել հայկական դպրոց՝ ուղղակի հերոսություն է:

Ուսուցիչը սփյուռքյան իրականության մեջ ամենահեղինակավոր և ամենահարգված անձը պետք է լինի: Հայ ուսուցիչն է, որ ազգային նվիրումով, մեծ հոգածությամբ և հետևողականությամբ սերունդներ է դաստիարակում, հայ է պահում մեր երեխաներին: Շնորհակալություն ձեզ, սիրելի ուսուցիչներ, շնորհակալություն Ձեր մարդակերտումի և հայակերտումի համար:

Իմ սիրելի՛ պարման-պարմանուհիներ, ես շատ ուրախ եմ, որ դուք հաճախում եք հայ դպրոց, ուր սովորում եք ձեր նախնիների ոսկեդենիկ մայրենին, ձեր էթնիկ Հայրենիքի հարուստ մշակույթն ու հազարամյակների պատմությունը:

Գիտցե՛ք, որ առանց հայոց լեզվի, առանց սեփական ազգի պատմության և մշակույթի, ազգային ավանդույթների իմացության հայը չի կարող լիարժեք հայ լինել:

Հայաստան պետության հորդորն է, որ դուք լինեք ԱՄՆ օրինապաշտ քաղաքացիներ, ինտեգրվեք ամերիկյան հասարակությանը: Սակայն դուք պետք է պայքարեք ձեր ինքնությանը, ձեր արմատին հավատարիմ մնալու համար, ձեր հոգում և սրտում վառ պահեք Մայր հայրենիքի նկատմամբ սերն ու պարտականությունը:

21-րդ դարը գիտելիքի, գաղափարի դար է: Ուրեմն լավ սովորեք, շատ գիտելիքներ ձեռք բերեք և կարողացեք այս արագ փոփոխվող և փոքրացող աշխարհում ձեր կարևոր տեղը գրավել:

Հավատացած եմ, որ միայն մեր հայրենասեր ծնողների, բարերարների, ազգապահպան կազմակերպությունների համատեղ ջանքերով հայկական կրթարանը հաջողությամբ կյանքի կկոչի իր առջև դրված խնդիրները՝ իրականացնելով հայեցի կրթության և դաստիարակության սրբազան գործը:

Կրկին շնորհավորում եմ դպրոցի բոլոր մանկավարժներին և աշակերտներին, ծնողներին, բարերարներին, մաղթում բազմաբեղուն գործունեություն, նորանոր նվաճումներ:

Միրով և ջերմությամբ՝

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒՅԱՆ

